Տնտեսական
համագործակցության և
զարգացման դաշնային
նախարարություն



Վարպետաց դասընթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում նախատեսված Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի համար

Ընտրության մեթոդաբանություն. նախնական ընտրություն և վերջնական ընտրության իրականացում

Իրականացնող՝

giz

Բովանդակություն

Ներածություն
Ժյուրին
Ընթացակարգը
Համապատասխանության ստուգում
Նախնական ընտրություն
Վերջնական ընտրություն
Վերջնական ընտրության իրականացում
Գնահատման բալային համակարգը
Փաստաթղթերի վավերականության ստուգում
Հրատարակչական տվյալներ

Ներածություն

Ընտրությանը նվիրված այս ձեռնարկը ժյուրիի անդամներին առաջարկներ է ներկայացնում տեխնիկական մասնագիտական կրթության և վերապատրաստման (ՏՄԿՎ) ոլորտում աշխատող ուսուցիչների և նշված բնագավառը ղեկավարող մասնագետների շրջանակից Հարավային Կովկասի երկրներում ծավալվող «Վարպետաց դասընթացներ՝ տեխնիկական մասնագիտական կրթության և վերապատրաստման ոլորտում» ծրագրի մասնակիցների ընտրության վերաբերյալ:

Մեթոդաբանության նպատակն է դիմորդների շրջանակից վերհանել առավել բարձր որակավորմամբ և պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակիցների ընտրության թափանցիկ, վստահելի և չափելի եղանակը:

Ընտրության ընդհանուր գործընթացի վերջնական արդյունքը բոլոր թեկնածուների գնահատումն է՝ ըստ համապատասխան միավորների : Թեկնածուների գբաղեցրած դիրքը որոշվում է յուրաքանչյուր թեկնածուի միավորների հիման վրա: Եթե ժյուրիի կողմից առաջարկված թեկնածուների թիվը գերազանցում է «Վարպետաց դասընթացներ ՏՄԿՎ ոլորտում» ծրագրի շրջանակներում առաջարկված թափուր տեղերի թիվը, ապա ակնկալվում է, որ թեկնածուների ընտրությունը կիրականացվի ըստ առաջարկվող գնահատման սանդղակի :

Որոշակի թեկնածուների ընտրության կամ այդ թեկնածուներին մերժելու համար ժյուրին իրավունք ունի հաշվի չառնել գնահատման սանդղակում վերջիններիս գբաղեցրած դիրքը: Նման դեպքերում, ժյուրիի որոշումը պետք է ընդունվի միաձայն: Եթե դա հնարավոր չէ, ապա որոշումը պետք է ընդունվի ձայների մեծամասնությամբ: Ժյուրիի որոշումը պետք է հիմնավորվի և արձանագրվի հատուկ հուշագրում, որը ստորագրվում է ժյուրիի բոլոր անդամների կողմից՝ ամփոփիչ ճեպազրույցի ընթացքում:

Ի լրումն վերոգրյալի, ընտրության մեթոդաբանությունը պետք է.

- իրազեկի ընտրությանն առնչվող կազմակերպական խնդիրների մասին;
- հեշտացնի ժյուրիի աշխատանքները;
- պարզաբանի ընտրության ընթացակարգերը;
- տրամադրի ընտրության համար նախատեսված ձևանմուշները;
- առաջարկի միավորների լավ մշակված համակարգ;
- ապահովի արդար և թափանցիկ ընտրության գործընթաց:

Ժյուրի

Ժյուրին տեղական երկու ներկայացուցիչներից և յուրաքանչյուր երկրում՝ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության երկուական ներկայացուցչից կազմված հանձնաժողով է: Ժյուրիի կազմը ԳՄՀԸ գործընկերներեի և գերմանական կողմի (ԳՄՀԸ)-ի համատեղ որոշման արդյունքն է:

Ժյուրին համատեղ որոշումներ է կայացնում հետևյալ հարցերի վերաբերյալ.

- Ընտրության մեթոդաբանության հաստատում;
- Համապատասխանության հաստատում;
- Թեկնածուների նախնական ընտրության դյուրացում՝ ընտրության մեթոդաբանությամբ հստակ սահմանված չափորոշիչների հիման վրա;
- Ընտրության վերջնական փուլի մասնակցության հրավեր՝ ուղղված թեկնածուներին;
- Վերջնական ընտրության իրականացում;
- Մասնակիցների վերջնական ցուցակի հաստատում:

Ընթացակարգ

Ընտրության ընդհանուր գործընթացը բաժանված է երեք մասի.

1. **Աշխատանքի տեխնիկական կողմը/ստացվող դիմումների համապատասխանության ստուգում**

   - Տեխնիկական տեսանկյունից համապատասխանող թեկնածուների առանձնացում:

2. **Թեկնածուների նախնական ընտրություն**

   - Թեկնածուների նախնական ընտրություն՝ համաձայն հարավկովկասյան երկրների և գերմանական փորձագետների կողմից մանրամասն մշակված ընտրության մեթոդաբանության:

3. **Մասնակիցների վերջնական ընտրություն**

   - Վերջնական ընտրության իրականացում Հարավկովկասյան երկրների երկու ներկայացուցիչներից և Գերմանիան ներկայացնող երկու անդամներից կազմված ժյուրիի կողմից ՝ համաձայն մանրամասն մշակված ժամանակացույցի:

Համապատասխանության ստուգում

Ստացվող դիմումների համապատասխանությունը ստուգելու նպատակն է՝

- Ճշտել արդյո՞ք պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացված են թե ոչ, և ամբողջական է արդյո՞ք ներկայացված փաստաթղթերի փաթեթը (այն է՝ ներկայացված են արդյո՞ք դիմումին կից պահանջվող բոլոր փաստաթղթեր);

- Հավաստել, որ դիմորդը բավարարում է ներկայացված տեխնիկական (օր. ունի ավարտական վկայական) և անհատական պահանջները (օր՝ տարիքը) ՏՄԿՎ-ի վարպետաց դասընթացներին մասնակցելու համար:

Դիմորդի կողմից ներկայացվող փաթեթում պետք է ներառված լինի՝

- Դիմորդի ինքնակենսագրությունը (ձևանմուշը առկա է);
- Դիմորդի "Մոտիվացիայի ձևակերպումը", որը ներառում է տվյալ բաժնի, դիմորդի գործառույթների, այդ հաստատությունում դիմորդի զբաղեցրած դիրքի նկարագրությունը;
- Դիմորդի անհատական շարժառիթները դասընթացից հետո ակնկալվող օգուտները հաստատության համար (ինստիտուցիոնալ գնահատում՝ դիմորդի կողմից;
- Մասնակցի ներդրումը (գործընթացները փոփոխելու դիմորդի անհատական հանձնառությունը);
- Գործատուի կողմից տրվող տեղեկանքն առ այն, որ վերջինս տեղյակ է ծրագրին մասնակցելու դիմորդի ցանկությանը, ինչպես նաև աջակցություն՝ վերջինիս մասնակցությանը՝ «Առաջնորդների միջազգային վերապատրաստում՝ ՏՄԿՎ ոլորտի՝մասնագետների համար» ծրագրում;
- Մասնակցի վերաինտեգրումը՝ ՏՄԿՎ վարպետաց դասընթացների հաջող ավարտից հետո;
- Աջակցություն՝ փորձարկման ծրագրի իրականացմանը;
- Ավարտական դիպլոմներ և/ կամ վկայականներ, անձնագրի լուսանկարներ:

Տեխնիկական կողմի ստուգումը կիրականացվի ԳՄՀԸ-ի կողմից՝ դիմումների ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո: Դիմորդի կողմից ներկայացվող փաստաթղթերի փաթեթից որևէ փաստաթղթի բացակայության դեպքում դիմորդին առաջարկվում է մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել բացակայող փաստաթղթերը: Համապատասխանության ստուգման արդյունքները կներկայացվեն ժյուրիի հաստատմանը:

Նախնական ընտրություն

Նախնական ընտրության նպատակն է կազմել առավելագույնը 45 թեկնածուներից բաղկացած ցուցակ, ովքեր և կհրավիրվեն մասնակցելու վերջնական ընտրությանը:

Նախնական ընտրության նպատակով կատարվող դիմումների քննության արդյունքներն իրենցից ներկայացնում են ժյուրիի յուրաքանչյուր անդամի անհատական մեկնաբանությունները/ տեսակետները ներկայացված մոտիվացիայի հիմնավորումների վերաբերյալ: Նշված մեկնաբանություններն ու դատողություններն առանձին-առանձին անդրադառնում են.

- Հաստատությանը/տվյալ բաժնին աջակցելու կարևորությանը և անհրաժեշտությանը;

- Վերապատրաստումից ստացվող օգուտին այն հաստատության համար, որը ներկայացնում է տվյալ դիմորդը;

- Դիմորդի զբաղեցրած դիրքին և ակնկալվող աշխատանքային գործունեությանը՝ ուղղված վերապատրաստումից հետո տվյալ բաժնում փոփոխությունների ընթացքին նպաստելուն;

- Հաստատությունում փոփոխությունների ընթացքին նպաստելու դիմորդի վերադասների պոտենցիալին (անձնական մոտիվացիային):

Գործընթացն առավել դյուրին դարձնելու և կանոնակարգելու նպատակով ժյուրիին կտրամադրվի ձևանմուշ: Նախնական ընտրության բալային համակարգին ծանոթանալու համար տես նաև 8-րդ էջը:

Ժյուրիի յուրաքանչյուր անդամ ներկայացված մոտիվացիայի հիմնավորումների համար պետք է շնորհի որոշակի միավորներ: Արդյունքը կլինի թեկնածուների ամփոփված վարկանիշավորումը, որն անհրաժեշտության դեպքում ընտրված թեկնածուներին հրավիրելուց առաջ կքննարկվի ժյուրիի անդամների շրջանում:

Վերջնական ընտրություն

Վերջնական ընտրության նպատակն է ապահովել 15 լավագույն մասնակիցների առանձնացումը հետևյալ տեսանկյուններից.

- Բացահայտումներ և նախնական ընտրության արդյունքներ;
- Ուժեղ անհատականություն, որը կաջակցի գործուղող հաստատությունում ընթացող փոփոխություններին;
- Մասնակցության անձնական շարժառիթները;
- Սոցիալական ունակությունները;
- Թեկնածուի աշխատանքային փորձը;
- Լեզվական հմտությունները:

Վերջնական ընտրության արդյունքն է հանդիսանում թեկնածուների վարկանիշային սանդղակը: Համատեղ քննարկման արդյունքում, ժյուրիի անդամները պետք է հաստատեն վարկանիշային սանդղակը և որոշում կայացնեն մասնակիցների վերջնական ցուցակի վերաբերյալ: «Առաջնորդների միջազգային վերապատրաստում՝ ՏՄԿՎ ոլորտի մասնագետների համար» ծրագրի վերջնական ընտրությանը մասնակցելու համար կհրավիրվի մինչև 15 թեկնածու:

Գործընթացն ավելի դյուրին դարձնելու և նախանշված նպատակին հասնելու համար վերջնական ընտրությունը բաժանվում է երեք հատվածի.

- Անհատական հարցազրույց՝ անգլերեն լեզվով: Այդ անհատական հարցազրույցը համարվում է վերջնական ընտրության առավել կարևոր հատվածը: Այն հաստատում է նախնական ենթադրությունները, որ արվել են նախնական ընտրության փուլում, ցույց է տալիս անհատական որակներն, ինչպես նաև հաստատում է անգլերեն լեզվի հմտությունները:
- Ներխմբային գնահատման ընթացքում թեկնածուն դրսևորում է իր սոցիալական և մասնագիտական կարողությունները;
- Անգլերեն լեզվի իմացության գնահատում:
- Անգլերեն լեզվի գրավոր թեստ, որը հաստատում է անգլերեն լեզվի գրավոր իմացությունը՝ ՏՄԿՎ ոլորտում:

Վերջնական ընտրության իրականացում

- **Անհատական հարցազրույց՝ ժյուրիի ընդհանուր կազմի մասնակցությամբ.** անհրաժեշտ է ժյուրիի 2 անդամ;
- **Ներխմբային գնահատում.** անհրաժեշտ է ժյուրիի 2 անդամ;
- **Անգլերեն լեզվի թեստ.** անց է կացվում անգլերենի մասնագետի կողմից:

Ժյուրիի անդամներն իրենք են որոշում, թե վերջնական ընտրության նպատակով իրենց կազմից ով պետք է մասնակցի անհատական հարցազրույցներին իսկ ով՝ ներխմբային գնահատմանը:

Ժյուրիի անդամները յուրաքանչյուր թեկնածուի գնահատականը ներկայացնում են մեկնաբանությունների և միավորների տեսքով: Ժյուրիի անդամների աշխատանքները հեշտացնելու նպատակով տրամադրվում են ձևանմուշներ:

Ժյուրիի աշխատանքը ամփոփվում է ճեպազրույցով: Ամփոփման ընթացքում ժյուրիի անդամները համատեղ կորոշեն թե որ տեղն է զբաղեցնում մասնակիցներից յուրաքանչյուրը: Համաձայնություն է ձեռք բերվում առ այն, որ առաջին տասնյոթ տեղը զբաղեցրած մասնակիցները պետք է հրավիրվեն մասնակցելու «ՏՄԿՎ ոլորտում վարպետաց դասընթացներ » ծրագրին:

Անհատական հարցազրույց

Անհատական հարցազրույցը պետք է ծառայի նախնական ընտրության արդյունքերի հաստատմանը և դրանց վերանայմանը՝ ուշադրությունը կենտրոնացնելով հետևյալ կետերի վրա.

- անհատական որակները;
- անձնական շարժառիթները;
- ակնկալվող ներդրումը՝ հաստատությունում ընթացող փոփոխությունների գործընթացին;
- աջակցություն, որ ակնկալվում է ստանալ վերադասներից;
- անգլերեն լեզվի հարուստ բառապաշարը, (անգլերեն բանավոր խոսք):

Անհատական հարցազրույցի անցկացման ընթացակարգը

Անհատական հարցազրույցի առավելագույն

տևողությունը 30 րոպե է:

Ժյուրիի անդամներին առաջարկվում է անհատական հարցազրույցները կառուցել հետևյալ կերպ.

- Թեկնածուի համառոտ ինքնաներկայացում՝ 5 րոպե;
- Շարժառիթներին և թեկնածուին տրամադրվող աջակցությանը վերաբերող հարցեր՝ ուղղված ժյուրիի անդամների կողմից;
- Թեկնածուի հնարավոր աշխատանքային գործունեությանն առնչվող հարցեր;
- Լրացուցիչ հարցեր (սոցիալական կարողություններ):

Ժյուրիի անդամների համար կնախապատրաստվեն մի շարք լրացուցիչ հարցեր, որոնց վերջիններս կկարողանան հղում կատարել հենց հարցազրույցի անցկացման վայրում:

Ժյուրիի անդամներին ներկայացվող փաստաթղթեր

Ժյուրիի անդամներին կտրամադրվի հարցազրույցի մանրամասն ժամանակացույցը և միավորների անհատական թերթիկները:

Միավորների թերթիկը պետք է ստորագրվի միավորները բաշխող ժյուրիի անդամներից յուրաքանչյուր կողմից և հարցազրույցից հետո փոխանցվի ընտրության գործընթացին օժանդակող թիմին:

Ներխմբային գնահատման գործընթացը

Ներխմբմային գնահատման նպատակն է գնահատել թեկնածուի սոցիալական կարողությունները, ինչպես նաև վերջինիս վարքագիծը խմբում, էմոցիոնալ հոգեկերտվածքը և կառավարչական հմտությունները, որոնք անհրաժեշտ են հետագա առաջադրանքը որպես տարածող իրականացնելու համար:

Գնահատման մեկ շրջանի համար կկազմվի թվով մինչև չորս թեկնածուներից բաղկացած խումբ:

Ներխմբային գնահատման համար պահանջվում է ժյուրիի երկու անդամ: Սակայն, խորհրդատվական նպատակով, ժյուրիի մյուս անդամները ևս կարող են միանալ ներխմբային գնահատմանը: Ներխմբային գնահատման յուրաքանչյուր շրջան կտևի առավելագույնը 90 րոպե:

Ներխմբային գնահատման ամփոփամբ և ժյուրիի կողմից ու ժյուրիի հետ համատեղ թեկնածուներին տրվող մասնագիտական արձագանքով կամփոփվի թեկնածուների ներխմբային գնահատումը, որը կտևի շուրջ 10 րոպե:

Ժյուրի անդամներին տրամադրվող փաստաթղթերը

Ներխմբային գնահատման համար պատասխանատու ժյուրիի անդամներից կազմված խմբին պետք է տրամադրվեն հետևյալ փաստաթղթերն ու ձևանմուշները.

- Յուրաքանչյուր մասնակցի միավորների անհատական թերթիկը: Միավորների այս թերթիկը պետք է ներառի ժյուրիի յուրաքանչյուր անդամի կողմից ներխմբային գնահատման արդյունքում թեկնածուներին տրված վերջնական միավորները;
- Միավորների թերթիկը պետք է ստորագրվի ժյուրիի անդամների կողմից և թեկնածուի հարցազրույցից հետո փոխանցվի ընտրությունն իրականացնող թիմին;
- Ժյուրիի անդամներին կտրամադրվի յուրաքանչյուր նիստի ծրագիրը՝ աջակցելու համար վերջիններիս գնահատման արդյունքում վերհանել համապատասխան թեկնածուներին:

Անկախ ընդհանուր հարցազրույցում ներգրավված ժյուրիի անդամների թվից, վերջնական գնահատման համար ընտրությունն իրականացնող թիմին տրվում է գնահատման 2 թերթիկ:

Ներխմբային գնահատման ընթացակարգը

Ներխմբային գնահատումը՝ որպես ընտրության մեթոդ, կներկայացվի թեկնածուների խմբին: Թեկնածուներին կառաջարկվի հաջորդաբար ընթերցել 2 կոնկրետ օրինակների վերլուծություն: Ընթերցելուց 10 րոպե անց, ներկայացված կոնկրետ օրինակի քննարկումը կտևի 50 րոպե: Անհրաժեշտության դեպքում, ժյուրիի անդամները կարող են միջամտել: Քննարկման արդյունքը կամփոփվի համառոտ ներկայացման (պրեզենտացիայի) տեսքով, որը պատրաստվում և հանձնվում է թեկնածուների կողմից համատեղ: Ներկայացումը չպետք է տևի ավելի քան 10 րոպե (չներառելով ներկայացման պատրաստման համար հատկացված10 րոպեն):

Անգլերեն լեզվի թեստ

Անգլերն լեզվի թեստը նախատեսվում է գնահատելու համար Հարավովկասյան երկրների ներկայացուցիչների անգլերեն լեզվի իմացությունը: Անգլերեն լեզվի թեստը բաժանվում է երեք հատվածի.

- Պատասխանի ճիշտ տարբերակի ընտրություն;
- Բազմակի ընտրության հարցեր;
- Անգլերեն լեզվի գրավոր թեստ (հարցերի քննարկում):

Գնահատման բալային համակարգը

Դիմորդների և թեկնածուների գնահատումն իրականացվում է ժյուրիի անդամների կողմից՝ նախնական և վերջնական ընտրության հետևյալ բալային սանդղակի հիման վրա.

Նախնական ընտրության միավորների համակարգը

- **Առավելագույնը 15 միավոր.** դասընթացից ստացվող օգուտը այն հաստատության համար, որը ներկայացնում է տվյալ մասնակիցը:
- **Առավելագույնը 15 միավոր.** դիմորդի հաստատությանը/ բաժնին ցուցաբերվող աջակցության կարևորությունն ու անհրաժեշտությունը:
- **Առավելագույնը 30 միավոր.** դիմորդի զբաղեցրած պաշտոնը և վերապատրաստումից հետո ակնկալվող աշխատանքային գործունեությունը՝ բաժնում ընթացող փոփոխություններին նպաստելու նպատակով:
- **Առավելագունը 40 միավոր.** պոտենցիալը (անձնական շարժառիթները) և վերադասների կողմից դիմորդին տրամադրվող աջակցությունը՝ հաստատությունում փոփոխությունների ընթացքին նպաստելու նպատակով:

Յուրաքանչյուր դիմորդին կտրվի առավելագույնը 100 միավոր: Որքան բարձր են դիմորդի միավորներն, այնքան բարձր է կարճ ցուցակում վերջինս զբաղեցրած վարկանիշային դիրքը:

Վերջնական ընտրության միավորների համակարգը

Վերջնական ընտրության համար յուրաքանչյուր թեկնածու կարող է հավաքել առավելագույնը 100 միավոր: Միավորները բաշխվում են հետևյալ կերպ.

- **Առավելագույը 40 միավոր.**

Անհատական հարցազրույց. (տես հավելված 1. Անհատական հարցազրույցի միավորների թերթիկը)

- **Առավելագույնը 40 միավոր.**

Ներխմբային գնահատում. (տես հավելված 2: ներխմբային գնահատման միավորների թերթիկ)

- **Առավելագույնը 20 միավոր**

Անգլերեն լեզվի թեստ. (տես հավելված 3. Լեզվի թեստի միավորների թերթիկը)

Հնարավոր է հավաքել ընդամենը 100 միավոր: Անցողիկ շեմը 60 միավորն է: 60 միավորից պակաս հավաքած թեկնածուներին չի թույլատրվի մասնակցել «Վարպետաց դասընթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում» ծրագրին:

Փաստաթղթերի վավերականության ստուգում

Վերջնական ընտրության ընթացքում կստուգվի հետևյալ փաստաթղթերի առկայությունը: Բոլոր փաստաթղթերը կստուգվեն, կզննվեն, սկանավորվեն և կիրականացվի տվյալների մշակում:

☐ Նույնականացման քարտ/ պատճեն;

☐ Համալսարանի ավարտական վկայական;

☐ Հետագա լրացուցիչ դասընթացների մասնակցության վկայականներ;

☐ Առողջական վիճակի մասին տեղեկանք:

Ժյուրիի անդամների ճեպազրույց

Մեկնարկային ճեպազրույցը կանցկացվի վերջնական ընտրության առաջին իսկ օրը՝ միջոցառման անցկացման վայրում:

Ամփոփիչ ճեպազրույցը, որի ընթացքում ակնկալվում է, որ ժուրին համաձայնություն կգա մասնակիցների վերջնական ցանկի վերաբերյալ, կանցկացվի ընտրության վերջին օրը:

Վերջնական ամփոփման արդյունքները կտրամադրվեն ԳՄՀԸ-ին և ԳՄՀԸ-ի գործընկերներին՝ հաստատման համար:

Օժանդակություն՝ ժյուրիին

Ժյուրիին օժանդակող ԳՄՀԸ-ի թիմը կաջակցի ընտրության նախապատրաստական աշխատանքներում, ինչպես նաև կաջակցի ժյուրիին ընտրության իրականացման գործընթացում:

Հրատարակչական տվյալներ

Հրատարակվել է
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից

Գրանցված գրասենյակների հասցեները՝ Բոննում և Էշբորնում

Դագ-Համարսկյոլդ -Վեգ 1-5 65760 Էշբորն
Հեռ. +49 6196 79-0
ֆաքս +49 619679-115

Ֆրիդրիխ-Էբերտ ծառուղի 36 + 40
53113 Բոնն
Հեռ. +49 228 44 60-0
ֆաքս +49 228 44 60-17 66
info@giz.de
www.giz.de

Խմբագրվել է

ԳՄՀԸ / Միջազգային համագործակցության և
ՏՄԿՎ ոլորտի մարդկային ռեսուրսների զարգացման ակադեմիայի կողմից
UNEVOC Centre, Մագդեբուրգ
Շելինգի փողոց 3-4 | 39104 Մագդեբուրգ
Գերմանիա

Դոկտոր Հարի Շտոլտե| Բաժնի ղեկավար

Պրն. Յոհաննես Ֆլայշլե| Ծրագրի ղեկավար
hrd@giz.de
Հեռ. + 49 (0)391 5371 300
Բջջ.+ 49 (0)160 7016 489

ԳՄՀԸ–ն պատասխանատվություն է կրում հրապարակված նյութի բովանդակության համար:

Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության հանձ նարարությամբ:

Չնավորում էջերի շարվածք և տպագրություն:

ԳՄՀԸ

Տվյալներն առ 2015թ. դեկտեմբերի

Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության գրասենյակների հասցեները

Բոնն, Դալմանի փողոց 4,
53113, **Բոնն**
Հեռ +49 228 99 535-0
Ֆաքս +49 228 99 535-3500

Բեռլին| Եվրոպայի տուն, Շթրեզեման փողոց 94
10963 Բեռլին
Հեռ. +49 30 18 535-0
Ֆաքս. +49 30 18 535-2501
poststelle@bmz.bund.de